

Գագիկ ԴԱՎԹՅԱՆ

Հայկ ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս

Առանց հողի՝ Բայց չէ որ մարդկությունը իր պատմության ամբողջ ընթացքում կյանքի համար անհրաժեշտ բարիքներն ստացել և ստանում է հողից: Եվ պատահական չէ, որ ժողովուրդը հողին տվել է մայր որոշիչը: Հողը սնում է բույսերին, որոնք բերը են տալիս մարդուն: Ուրեմն հողն անհրաժեշտ է նրա վրա բույսեր աճեցնելու համար. որքան արգավանդ է հողը, այնքան փարթամ և բերքառատ են մշակվող բույսերը: Եվ մարդկությանը անհրաժեշտ գյուղատնտեսական մթերքները, ինարկե, տեսանելի պագայում զիմավորապես պետք է արտադրվեն հողի ամենախնտենածիվ և նպատակահարմար շահագործման միջոցով:


Սակայն արդեն կարելի է խոսել նաև բույսերի անհող մշակման մասին: Այդ, հազարամյակների ընթացքում մարդն ուսումնասիրել է, թե ինչպես են սնվում բույսեր՝ աճելով հողի վրա, ինչ նույթեր են յուրացնում հողից: Իմանալով այդ, մարդիկ սովորել են պարարտացնել հողը

պանազան նյութերով՝ գոմադրով, թռչնադրով, կրով, մոխրով, իսկ բիմիական արդյունաբերության զարգացման շնորհիվ նաև հանքային պարարտանյութերով:

Բիմիական պարարտանյութեր կիրառելով մարդիկ ոչ միայն լրացնում են հողի մեջ պակաս չափով գտնվող նյութերը, այլև արհեստականորեն բարձրացնում են հողի բերրիությունը: Երկրագործության բիմիացումը հողի արգավանդության նոր, ավելի բարձր մակարդակ է ապահովում:

Գիտությունը պարել է, թե ինչ նյութեր են հարկավոր բույսերի աճի և զարգացման համար և արհեստական ճանապարհով ազդու, ֆոսֆոր, կալիում, կիր, ծծումբ և շատ միկրոէլեմենտներ պարունակող սննդարար լուծույթներով սնելով. կարողացել է աճեցնել բույսերը սերմից սերմ:

Սկզբում դրանք գիտական փորձեր էին, այս կամ այն սննդարարի ֆիզիոլոգիական նշանակությունն ուսումնաժողովներու համար: Սակայն վերջին տասնամ-



ՀՍՍՌ ԳԱ Ագրոբիմիայի լաբորատորիայի բաց հիդրոպոնային կայանի մակետը:

յակների ընթացքում գիտնականները փորձեցին դուրս բերել այդ հետազոտությունները լաբորատոր սահմաններից և ստեղծել արհեստական սննդառության միջավայր՝ բույսեր աճեցնելու և նրանցից տնտեսական արդյունք ստանալու համար: Այս գործը հատկապես արագ ըսկըսեց զարգանալ վերջին 10 տարվա ընթացքում՝ արտասահմանյան երկրներում, ինչպես նաև Սովետական Միության մեջ:

Բույսերի անհող մշակման տարրեր տիպեր գոյություն ունեն, ինչպես օրինակ, բույսերը ջրային միջավայրում աճեցնելը, մասր ճալաքարի, խճի, հրաբխային խարամների մանրաբեկոր շերտի մեջ սընդնդարար լուծույթ մղելու եղանակը և այլն: Բույսերի անհող մշակումը մեծ ժամանք կիրառվում է ջերմատներում՝ բանջարեղենի և ծաղիկների ինտենսիվ արտադրության համար, բայց հնարավոր է իրականացնել նաև առանց ջերմատների բացօթյա: Այդպիսի բացօթյա հիդրոպոնային փորձակայան ստեղծված է Հայկ. ՍՍՌ ԳԱ ագրոբիմիայի լաբորատորիայում: Այդ կայանն առաջինն է և ամենամեծը Սովետական Միության մեջ: Այստեղ ստացված արդյունքներն այնպան նշանակալից են, որ հիմք են տա-



Եգիպտացորենի աճը տարրեր լուսավորվածությունների տակ.

ծախ կողմում՝ լուսավորվածությունը 1200 էրգ/սմ² վրկ,

կննտրուում՝ լուսավորվածությունը 1200 էրգ/սմ² վրկ,

աջ կողմում՝ լուսավորվածությունը 4000 էրգ/սմ² վրկ:

Լիս ավելի ՏԵՍ հԱՅԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԱՃԵԼՈՒ ՆՈՐ մԵԹՈՒԾ: ՀՀՀ ԵԿՈՂԻՍՏԵԿԱ

Ապահովագրություն ԶՈՒՄ ԱԿՐ ԲՈՂՈՅ ՖՈՂՈՅ ՄՈՂՈՅ

Ա. Կ. Ա. ՄԱՅՆԱԿԻՆ
Ա. Ա. ԱՎԱԽԻԿՅԱՆԻ ԱՆՎԱ

8042-64



Հիդրոպոնային պայմաններում աճեցված պոմելոններ:

Բական դաշտային պայմաններում Արովյանի անվան շրջանի կողմանտեսություններում մեկ հեկտարից ստացվում է մոտ 10 տոննա գազար, ապա անհող մշակման դեպքում մենք ստացել ենք 56-ից մինչև 120 տոննա, ըստ որում անհող մշակման դեպքում գազարը հասունանում է 30—50 օրով ավելի շուտ, որը համընկնում է բանջարեղենի (պոմիդորի, բաղրիջանի, տաքեղի) առատ բերքի ժամկետին. այդպիսով ժամանակին ապահովում է պահածոների արդյունաբերության պահանջը: Պոմիդորի բերքը դաշտային պայմաններում սովորաբար կազմում է 250—350 գենտներ, մինչեւ անհող մշակման դեպքում ստացվել է 900-ից մինչև 1500 գենտներ բարձրորակ բերք:


Ծնորհիվ բերքի հասունացման արագացման, բացօրյա անհող մշակման դեպքում հնարավոր է ստանալ տարեկան ոչ թե մեկ, այլ երկու և նույնիսկ երեք բերք: Այս, կարելի է, օրինակ, ստանալ

վարունգի, բողկի, կանաչ լոբու երեք բերք:

Իր բնույթով բույսերի անհող մշակումը, որ ապահովված է ավտոմատ սարքավորմամբ, գործարանային, արդյունաբերական բնույթը ունի, իսկ բույսերի մըշակության համար պահանջվում է արդեն ոչ թե ագրոտեխնիկա, այլ արտադրության լավ մշակված տեխնոլոգիական ընթացք:

Բույսերի անհող մշակման միջոցով արդեն հիմա ել հնարավոր է բաղաքային ազգաբնակչությանը կլոր տարին ապահովել թարմ բանջարեղենով:

Սակայն մեծ և բոլորովին նոր խընդիրներ են առաջանում այդ կապակցությամբ գիտության առաջ: Արմեստական վայմաններում բույսերի սննդառության ֆիզիոլոգիական և ագրորիմիական տեսական հետազոտությունները, ինչպես նաև ինժեներական-կոնստրուկտորական մշակումները հնարավորություն կտան անընդհատ կատարելագործելու և ավտոմատացնելու բուսական բերքի արտադրության ինդուստրիալ մեթոդները և բացահայտելու նրանց նորանոր ու անսպասելի հնարավորությունները:



Հիդրոպոնային կայանում սնիչ լուծույթի պատրաստման հանգույցը: